

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

ՏԱԹԵՎԻԿ ՌԵՎԱԶՅԱՆ

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Մումբայ, Հնդկաստան (31/03-03/04), Նյու Դելի, Հնդկաստան (03/04-05/04), Սինգապուր (06/04-12/04)

4. Հրավիրող կողմը

Սինգապուր՝ Սինգապուրի ավիացիոն ակադեմիա
Հնդկաստան՝ Մասնավոր հատված

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Հնդկաստան (Մումբայ, Նյու Դելի)՝

Հնդկաստանի ավիացիոն իշխանությունների հետ հանդիպումներ և հնդկական ավիաընկերությունների ներկայացուցիչների հետ աշխատանքային քննարկումներ:

Քննարկումներ երկու երկրների միջև Օդային Հաղորդակցությունների մասին համաձայնագրի արդիականացման հնարավորության վերաբերյալ:

Քննարկումներ դեպի Հայաստան ուղիղ չվերթներ իրականացնելու վերաբերյալ, ինչպես նաև տարանցիկ թռիչքների հնարավորության քննարկումներ:

Սինգապուր՝

Մասնակցություն Սինգապուրի ավիացիոն ակադեմիայի կողմից կազմակերպվող «Ավիացիայի առաջխաղացումը. միասին կառուցենք մեր ապագան» թեմայով քաղաքացիական ավիացիայի ոլորտի գլխավոր տնօրենների 7-րդ համաժողովին, ինչպես նաև Սինգապուրի ավիացիոն ակադեմիայի և Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության (ICAO) կողմից կազմակերպվող Ավիացիոն անվտանգության ծրագրին:

Քննարկումներ «Սինգապուր Էյրլայնս Գրուպի» հետ, որի մեջ ներառված են «Սիլկ Էյրը», «Ֆլայ Սկուտը» և «Սինգապուր Էյրլայնսը»:

6. Քննարկված թեմաները

Հնդկաստան

- հնդկական ավիաընկերությունների հետ քննարկվել են դեպի ՀՀ չվերթների մեկնարկի համար անհրաժեշտ նախապայմանները.
- հնդկական ավիաընկերությունների հետ քննարկվել է նաև Հայաստանի որպես տարանցիկ գոտի հանդես գալու հնարավորությունը.
- Հնդկաստանի ավիացիոն իշխանությունների հետ քննարկվել են ՀՀ կառավարության և Հնդկաստանի կառավարության միջև օդային փոխադրումների ոլորտում առկա միջկառավարական համաձայնագրի արդիականացման հարցը.
- մի շարք հնդկական ավիաընկերությունների հետ քննարկվել են Հայաստանում ներդրումների միջոցով ավիաընկերություն հիմնելու հնարավորությունները:

Սինգապուր

- քննարկումներ «Սինգապուր Էյրլայնս Գրուպի» հետ՝ հնարավոր համագործակցության վերաբերյալ.
- քննարկումներ ավիացիոն ղեկավարների հետ՝ կրթության ոլորտում հնարավոր համագործակցության վերաբերյալ.
- Հայաստանն ավելի տեսանելի դարձնել աշխարհի ավիացիոն ղեկավարների համար.
- ավիացիայի ոլորտի բարձրաստիճան ղեկավարների հետ ծավալուն քննարկումներ ավիացիոն անվտանգության վերաբերյալ.
- Boeing 737 MAX ինքնաթիռի հետագա շահագործման հետ կապված քննարկումներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Հնդկաստան

Հանդիպում հնդկական «Գո Էյր» ավիաընկերության գլխավոր տնօրեն և սեփականատեր Ջեհ Կադիայի հետ: Հանդիպման ընթացքում «Գո Էյր» ավիաընկերության տնօրենին ներկայացվել են Հայաստանի ավիացիոն ենթակառուցվածքների հնարավորությունը, զբոսաշրջային հիմնական կենտրոնները, ինչպես նաև Հայաստանից դեպի Եվրոպա, Միջին Արևելք և ԱՊՀ թռիչքների իրականացման հնարավորությունը:

Ավիաընկերության տնօրենը նշեց, որ հետաքրքրված են դեպի մեր տարածաշրջան Հնդկաստանից ուղիղ օդային հաղորդակցությունների իրականացմամբ, ինչպես նաև օդի 5-րդ ազատության օգտագործմամբ չվերթները շարունակելու հարցում:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց երկուստեք ավելի խորը ուսումնասիրություններ իրականացնել՝ պարզելու համար ուղիղ չվերթների հնարավորությունները, ինչպես նաև գնահատելու Հայաստանի զբոսաշրջային կենտրոնների առկա պոտենցիալը:

Հանդիպում Հնդկաստանի քաղաքացիական ավիացիայի նախարարության համատեղ քարտուղար Շեֆալի Զունեջայի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են օդային փոխադրումների ոլորտում երկու երկրների միջև առկա միջկառավարական համաձայնագրի արդիականացման հարցը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանը քաղաքացիական ավիացիայի ոլորտում 2013 թվականից «Բաց երկնքի» քաղաքականություն է իրականացնում:

Հանդիպում Հնդկաստանի քաղաքացիական ավիացիայի նախարարության գլխավոր վարչության պետ Բիուլարի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են քաղաքացիական ավիացիայի ոլորտում երկու երկրների համագործակցության հնարավորությունները, ինչպես նաև հնդկական ավիաընկերությունների կողմից դեպի Հայաստան թռիչքների իրականացման հնարավորությունները:

Հանդիպում Հնդկաստանի առևտրի, արդյունաբերության և քաղաքացիական ավիացիայի նախարար Սուրեշ Պրաբհուի հետ:

Հանդիպման ընթացքում ամփոփվել են մինչ այդ տեղի ունեցած հանդիպումների արդյունքները, ինչպես նաև քննարկվել են երկու երկրների միջև օդային ուղիղ հաղորդակցությունների մեկնարկի համար երկու ավիացիոն իշխանությունների կողմից անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերելու հարցը: Հանդիպումներ են տեղի ունցել հնդկական «Վիստարա», «Էյր Էյժա Ինդիա» «Սփայս Ջեթ», «Էյր Ինդիա» և «Ինդիգո» ավիաընկերությունների բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Հանդիպումների ընթացքում ավիաընկերությունների ներկայացուցիչներին ներկայացվել են Հայաստանի ավիացիոն ենթակառուցվածքների հնարավորությունը, զբոսաշրջային հիմնական կենտրոնները, ինչպես նաև Հայաստանից դեպի Եվրոպա թռիչքների իրականացման հնարավորությունը: Ավիաընկերությունների հիմնական մասը նշեցին, որ հետաքրքրված են դեպի մեր տարածաշրջան Հնդկաստանից ուղիղ օդային հաղորդակցությունների իրականացմամբ, ինչպես նաև օդի 5-րդ ազատության օգտագործմամբ դեպի Եվրոպա չվերթները շարունակելու հարցում: Նրանք նաև դիտարկում էին Հայաստանը որպես տարանցիկ գոտի:

Հանդիպումների ընթացքում ներկայացվել են նաև ՀՀ օդային տարածքի, օդանավակայանների ներուժը, ուղևորահոսքերի վերլուծությունը, ակնկալվող ուղևորահոսքի աճը:

Հնդկաստանում Հայաստանի դեսպանատանը տեղի ունեցավ հանդիպում հայկական սփյուռքի հետ: Տեղի ունեցավ հարց ու պատասխան և քննարկվեց այն հարցը, թե ինչպես կարող է հայկական սփյուռքը ներգրավվել դեպի Հայաստան թռիչքների իրագործման մեջ:

Հանդիպում Հնդկաստանում Հայաստանի դեսպանի հետ, որի ընթացքում քննարկվել են մուտքի արտոնագրերի և առցանց մուտքի արտոնագրերի հնարավորություններն ու մարտահրավերները:

Սինգապուր

Բազմաթիվ հանդիպումներ են ունեցել տարբեր երկրների քաղաքացիական ավիացիայի ղեկավարների հետ, որոնց թվում նաև նրանց, ում հետ մենք չունենք օդային հաղորդակցությունների մասին համաձայնագիր: Այժմ մենք ունենք անմիջական շփում այդ երկրների հետ և կարող ենք հստակ հասկանալ, թե որ երկրներն են հանդիսանում առաջնահերթ:

«Կառուցելու մեկ ավիացիոն ապագան՝ օգտագործելով տեխնոլոգիան» լիազումար նիստի ընթացքում ելույթ են ունեցել շուրջ 120 ավիացիոն ղեկավարների առաջ՝ նշելով մի քանի կարևոր հարցեր, որոնց հանդիպում են աշխարհի առաջնորդներն այսօր և ինչպես կարելի այդ հարցերը լուծել կրթության միջոցով: Ելույթի ժամանակ նիստի նախագահը կարծիք հնչեցրեց, որ Հայաստանը կարող է դառնալ նորարարությունների ստեղծման հաջորդ վայրը: Այս քննարկման ժամանակ նշեցի նաև, որ Հայաստանը կիյուրընկալի տեղեկատվական տեխնոլոգիաների համաշխարհային կոնգրեսը (WCIT 2019):

Համաշխարհային քաղաքացիական ավիացիայի գլխավոր տնօրենների համաժողովի ժամանակ հարցազրույց տալու ընթացքում ներկայացրել են Հայաստանը և թե ինչ օգուտ կստանա Հայաստանը իմ մասնակցությունից, ինչպես նաև խոսել են այն մասին, թե ինչ օգուտ կտա Հայաստանին՝ Unmanned Systems Asia ցուցահանդեսին մասնակցությունը, որտեղ ներկայացվեցին արդի տեխնոլոգիաները և լուծումները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հնդկաստան

Հնդկական ավիաընկերությունների կողմից պայմանավորվածություն է ձեռք բերվել, որ հնարավորինս սեղմ ժամկետում կուսումնասիրվի ներկայացված տեղեկատվությունը և կներկայացվի դիրքորոշում հետագա համագործակցության վերաբերյալ:

Մասնավորապես «Ինդիգո» ավիաընկերությունը մեծ հետաքրքրություն ցուցաբերեց և խոստացավ ուղարկել առաջարկ: Նաև Քաղաքացիական ավիացիայի նախարարությունը խոստացավ վերանայել երկու երկրների միջև Օդային Հաղորդակցությունների մասին համաձայնագիրը և քննարկել, թե ինչ փոփոխություններ կարող են արվել:

Սինգապուր

Իսլանդիայի քաղաքացիական ավիացիայի ղեկավարը խոստացել է ինձ ծանոթացնել այն թիմին, որը ստեղծել է խթանող ծրագիր՝ Իսլանդիային աճ բերելու նպատակով: Նրանք մեծ հաջողություններ են ունեցել Իսլանդիան, որպես տարանցիկ կետ բացելու հարցում:

Մալթայի քաղաքացիական ավիացիայի ղեկավարությունը կծանոթացնի մեզ ավիաընկերությունների հետ, որոնք գրանցված են Մալթայում (բայց թռիչքներ են իրականացնում այլ երկրներում) դեպի Հայաստան թռիչքներ կատարելու նպատակով: Մալթան, լինելով փոքր երկիր, հաջողել է դառնալ հարմար երկիր ինքնաթիռներ գրանցելու համար:

Մեր կարիքներից ելնելով՝ Սինգապուրի ավիացիոն ակադեմիան առաջարկել է Հայաստանին հարմարեցված ծրագիր իրականացնել: Նրանց փորձագետները կայցելեն Հայաստանի քաղաքացիական ավիացիայի կոմիտե և աշխատանքներ կտանեն մեր աշխատակիցների հետ: Բոլոր ծախսերը ապահովելու է Սինգապուրի կառավարությունը:

Ստացել ենք Սինգապուրի կառավարության կողմից ֆինանսավորվող Սինգապուրի ավիացիոն ակադեմիայի հետ համատեղ իրականացվող ԻԿԱՕ զարգացող երկրների ուսուցման ծրագրին դիմելու ընդհանուր հնարավորություններ:

Տեղեկություններ եմ ստացել ավիացիոն ոլորտի KOICA կրթաթոշակի վերաբերյալ, որը ֆինանսավորվում է Կորեայի Հանրապետության Կառավարության կողմից:

- 9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Հնդկաստան

- հնդկական կողմը պատրաստ է Օդային հաղորդակցությունների մասին համաձայնագրի արդիականացմանը.
- «Ինդիգո» ավիաընկերությունը հետաքրքրված է Հայաստանը որպես տարանցիկ գոտի օգտագործել դեպի Եվրոպա թռիչքներ կատարելու համար և պատրաստ է առաջարկ ուղարկել հետագա համագործակցության վերաբերյալ.
- «Սփայս Ջեթ» ավիաընկերությունը նույնպես հետաքրքրված է Հայաստանը որպես տարանցիկ գոտի օգտագործել դեպի Եվրոպա թռիչքներ կատարելու համար: Նրանց պատվիրակությունը մոտ ապագայում նախատեսում է այցելել Հայաստան՝ հնարավոր համագործակցությունները քննարկելու համար.
- «Գո Էյր» ավիաընկերությունը հետաքրքրված է դեպի Հայաստան ուղիղ չվերթներ իրականացնելու՝ նպատակ ունենալով սպասարկել տարածաշրջանը:
Նրանք խնդրել էին իրենց կապել Զբոսաշրջության կոմիտեի հետ՝ հասկանալու, թե ինչ հետաքրքիր փաթեթներ կներկայացնեն հնդիկ զբոսաշրջիկների համար: Հիմնվելով այդ տեղեկատվության վրա՝ նրանց համար պարզ կլինի այդ փաթեթների պահանջարկը: Ավելին, նրանք նույնպես պլանավորում են մոտ ապագայում այցելել Հայաստան՝ հնարավոր համագործակցությունները քննարկելու նպատակով:
- «Էյր Էյժա Ինդիա» ավիաընկերությունը մեր առաջարկը կներկայացնի Թոնի Ֆերնանդեսին, «Էյր Էյժա»-ի գլխամաս, որը գտնվում է Մալայզիայի մայրաքաղաք Կուալա Լումպուրում:
- Ներկայումս «Վիստարա» ավիաընկերությունը ավելի կենտրոնացած է բիզնես ուղևորների ուղղությամբ, այդ իսկ պատճառով այս փուլում Հայաստանը որպես այդպիսին չի դիտարկվում:

Սինգապուր

- Ներկա են գտնվել փակ դռների ետևում քննարկման, որտեղ անվտանգության փորձագետները կիսվել են կենսական խնդիրներով և «նոր» անվտանգության սպառնալիքներով, որոնց մենք պետք է պատրաստ լինենք, որպես երկիր և քաղաքացիական ավիացիա: Նրանք բարձրացրեցին կարևոր հարցեր, մեր գործընթացներն ավելի արդյունավետ դարձնելու, որոնք նոր սպառնալիքների հաղթահարման նոր մեթոդներ են պարունակում.
- Boeing 737 MAX- ի հետ կապված անվտանգության հարցերում մենք այժմ անմիջականորեն կապ ունենք Եվրոպական ավիացիոն անվտանգության գործակալության, Դաշնային ավիացիոն վարչության և Boeing-ի ղեկավարների հետ, ովքեր մեզ հնարավորություն են տալիս ավելի մոտ

հետևել իրավիճակին: Սինգապուրի Boeing- ի գրասենյակում ներկա են գտնվել իրենց շնորհանդեսին և հնարավորություն են ունեցել թոչք ունենալ իրենց սիմուլյատորով՝ հասկանալու փոփոխությունները համակարգում: Թարմացված տեղեկատվության հիման վրա մենք շարունակում ենք երկինքը փակ պահել Boeing 737 MAX տեսակի օդանավի համար.

- ներկա են գտնվել փակ դռների ետևում քննարկման ԻԿԱՕ-ի խորհրդի նախագահի հետ անօդաչու թռչող սարքերի ապագայի վերաբերյալ: Հիմնական խնդիրն այն էր, որ մասնավոր հատվածը շատ ավելի արագ է զարգանում, քան ԻԿԱՕ-ն և ինչ պետք է անի պետությունը այդ դեպքում: Կիսվեցի նրանց հետ, որ Հայաստանը հիմա շատ առաջ է: Մենք ունենք պատրաստ նախագիծ և սպասում ենք պատասխանի մասնավոր հատվածից: Մեզ համար շատ կարևոր է ապահովել անվտանգությունը և ապահովությունը՝

չսահմանափակելով մասնավոր հատվածը ոլորտի զարգացման գործում: Արդյունքում ԻԿԱՕ երկրների և մյուս պետությունների առաջատարները հայտնեցին, որ պատրաստ են համագործակցել և կիսել իրենց գիտելիքները, թե ինչպես են նրանք լուծել իրենց խնդիրները:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

23-ը ապրիլի, 2019թ.

X
